Փոքր բիզնեսի վարկերի համակարգման բաժնի առաջատար մասնագետ

Աշխատանքի նկարագրություն

Մասնաճյուղային ցանցի կողմից փոքր բիզնեսի վարկատեսակներով ներկայացված հայտերի դիտարկում և կոորդինացում

Աշխատանքային պարտականություններ

- Փոքր բիզնեսի հաճախորդների ֆինանսական վիճակի ուսումնասիրություն
- Մասնաճյուղի կողմից փոքր բիզնեսի վարկատեսակներով ներկայացված հայտերի դիտարկում
- Փոքր բիզնեսի հաճախորդների ընթացիկ սպասարկման հարցերի շուրջ օպերատիվ և ամբողջական խորհրդատվության տրամադրում
- Փոքր բիզնեսի վարկավորման գործընթացի կազմակերպում համապատասխան վարկատեսակի պահանջներին՝ ներառյալ աշխատանքի կազմակերպում Բանկի այլ ստորաբաժանումների հետ
- Բաժնի պետին աշխատանքի բարելավման հետ կապված առաջարկությունների ներկայացում

Անհրաժեշտ պահանջներ

- Բարձրագույն տնտեսագիտական, տեխնիկական կամ իրավաբանական կրթություն
- Բանկային համակարգում առնվազն երկու տարվա աշխատանքային փորձ, որից նվազագույնը մեկ տարին՝ փոքր բիզնեսի վարկավորման ոլորտում
- Բանկային գործունեությունը կարգավորող օրենսդրության և նորմատիվային դաշտի իմացություն
- Ֆինանսական վերլուծության հմտություններ
- Հաղորդակցման հմտություններ
- MS Office (Word, Excel, PowerPoint, Outlook) իմացություն
- Հայերենի լավ տիրապետում

- Ռուսերեն և/կամ անգլերեն լեզուների բավարար իմացություն

Դիմելու ընթացակարգը

Ներկայացված պահանջներին համապատասխանող թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրականը hr@armbusinessbank.am հասցեին:

Վերջնաժամկետ՝ 23.09.2023թ.:

Խնդրում ենք նամակի թեմա (subject) դաշտը լրացնել նշելով պաշտոնը և Ձեր անուն, ազգանունը հետևյալ կերպ՝ "Leading Specialist of Small Business Loans Coordination Unit – Name, Surname":